ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

26.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-1 գնման պայմանագրի

ք. Երևան «30» «06» 2026 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 26.02.2026 թվականին կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/21-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը, ինչպես նաև ***Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության*** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով սահմանված ***1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ չափաբաժինների*** կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է ***1*** էջից, կնքվում է 2/երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Երևանի քաղաքապետարան	«ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս պ. 5
ՀՀ ֆինանսների նախարարության	Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2500011379500100
Հ/Հ 900011057982	ՀՎՀՀ 00200833
Հ/Հ 900011065803	
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Ա. Սարգսյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.